ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 4281-Ա « 17 » հոկտեմբերի 2025թ.

«ԵՐԵՎԱՆԻ Մ.ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՆՎԱՆ Հ.143 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ԿԱՐԻՆԵ ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ ԵՎ «ԵՐԵՎԱՆԻ Հ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.199 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ՎԻՈԼԵՏՏԱ ԲԵՋԱՆՅԱՆԻՆ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵԿԻՆ ԵՎ ԴԱԼԻԱՆ ՔԱՂԱՔՆԵՐ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետ Մ.Խաչատրյանի 26.09.2025 թվականի № Ն/57090-25 գրությունը՝ հայ-չինական համագործակցության խթանման, երկու երկրների միջև կրթական համակարգի ուսումնասիրման նպատակով.

1. «Երևանի Մ.Խորենացու անվան հ.143 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Կարինե Կոստանյանին և «Երևանի Հ.Խաչատրյանի անվան հ.199 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Վիոլետտա Բեջանյանին՝ 2025 թվականի հոկտեմբերի 18-ից 22-ը ներառյալ գործուղել Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Պեկին և Դալիան քաղաքներ:

2.Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է հրավիրող կողմը՝ բացառությամբ ավիատոմսի, որն իրականացվում է «Երևանի Հ.Խաչատրյանի անվան հ.199 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2025 թվականի բյուջեի միջոցների հաշվին և «Երևանի Մ.Խորենացու անվան հ.143 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2025 թվականի բյուջեի միջոցների հաշվին:

3. «Երևանի Մ.Խորենացու անվան հ.143 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Կարինե Կոստանյանի բացակայության ընթացքում տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն դպրոցի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Լուարա Տեփոյանին:

4. «Երևանի Հ.Խաչատրյանի անվան հ.199 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Վիոլետտա Բեջանյանի բացակայության ընթացքում տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն դպրոցի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ժաննա Հակոբյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ